


628

1. #4





ԵՐԱՅԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 76

4 ՅՈՒՆԻՍԿ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի ④ 4 Յունուար 1913 ④ Թիւ 76

«Սրբազան Բահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի զաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Կամակ Կարդ. Մէրի Տէյ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարտ:

Նոր Տարի

Մեր ընթերցողներուն ի տես կը մաղթենք
երջանիկ Նոր Տարի մը, յի երկնից ընտելացոյն
պարգեւներով: Բայց ո՛րքան անսոյց է եւ քե-
կանոս այս կեանքը, «Իբրեւ զժողովի խոսոյ»:
Ահա տարի մըն ալ անցաւ, անկարճ զնաց ի
ծոց յախճանականութեան, ուր կը մղեն զնեզ
անկող՝ ժաւերն, օրերն ու տարիները, գորս
կ'անցունենք քերեւս խնդարով, կամ չար եւս
ունայնութեան ծառայելով: Եւ ասկայն անհաւոր
աղէկներ յաջորդաբար կամ միանգամայն կը
կեղեքեն զնեզ. 1912 արիւնավաթ ուրուսական
մըն է պատմութեան մեջ: Մարդկութեան հի-
մերը կարծես կը փայփայեն, տախաչի է Ասու-
ծոյ արդարութիւնը: Կ'անցնին կ'ոչնչանան մար-
դեր, ինքնակազմեր ու ազգեր. Եւ Աստուած է

միայն անկոտորիս, անենախաւ եւ երկրպագելի.
Եւ յոր Ս. Եկեղեցին է միայն վիմահաստաս եւ
անաստան: Մարդն հիւշէ մըն է փեղեղաց փոյ,
յակ աննախ էակին հաւեւանութեանը՝ ոչինչ.
ասկան եք հպասակի Անոր եւ յոր Եկեղեցոյն,
պիտի անմահանայ փառո՛ք Զուարթնոց հետ:
Ահա նսեհը՝ որ մարդուն ամենօրեայ մտած-
մունքը, յոր ուրախութիւնը, յոր հուսիսը պէտք
է գրաւէ. ապագայի անցեղորի յոյսը, ասոյ որ կը
ճառագայթէ փոփոխական աշխարհի եւ մահու
սրտաբախիծ հորիզոնէն... Մահին ուրեմն եւ
շո՛ւս անցնին այս դժբախտ կեանց օրեր ու տա-
րիներ. ու երթանք մեր երանելի հայրենիքին,
ուր փրկելիք կը ապաստեն մեզ, ի նորն Երուսա-
ղեմ, որ Պէտք չունի արեւի եւ լուսնոյ, զի
հոն յոյսը Գառնն է, ուր պիտի ջնջէ Աս-
տուած ամեն արցունք. եւ չկայ հոն մահ եւ
ոչ սուգ եւ ոչ աղաղակ, ոչ ցաւ կայ եւ ոչ
աշխատանք, զի առաջինը անցաւ: Յաղթողը

պիտի ժառանգէ այս ամենը»: ՅԻՍՈՒՄԻ ՓՐԿՁԻ տնունով կը մխի սարին եւ պիտի մխի Սասունոյ մեզի շնորհելիք ամեն սարիները: Անով է այս մեծ յաղրութիւնը, որ Սասունոյ հաւնար փաշուած մեր չնչին ցարերուն հունկէն պիտի բողբոջի իբրեւ մեծ ծառ կենաց սննտահից եւ անկի՝ սրակ փառաց անթարշաւ: Նոր Տարին ուրեմն ծառայի մեզ նոր արդարութեան, իր բոլոր յոյսերովն ու պսսրմանով. եւ բսնկ. «Տէ՛ր, այս սարի ալ բոլ իմ կեանքս. բերես պտուղ բերե. ապա թէ ոչ՝ սարիէ մը կտրէ զայն»... (Ղուկ. ԺԳ.):

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ԲԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

է

Ե Պ Ա Ր Ք Ո Ս Ա Ր Ա Ն

(Շար.)

Երեքշաբթիէն Չորեքշաբթի գացող գիշերը, ինչպէս վերը տեսանք. թշնամիք եւ հակառակորդք Տեառն Կոմիտասայ արբեալ եւ յայտնապէս գործած չարիքի հաճոյքէն թմրեալ խոր քնով մը անցուցին. սակայն, անմեղ Տէր Կոմիտասը՝ իւր աշակերտին տան մէջ արգելափակուած, կատարեալ համակերպութեամբ Աստուծոյ կամաց, հանդարտ եւ խաղաղ հոգւով մը հոգման գիշեր մը անցուց, աղօթեց անքուն մինչեւ առաւօտ՝ իր Աստուծոյն առջեւ. աղօթեց խոնարհութեամբ եւ խանդավառ սիրով իւր հոգւոյն փրկութեան համար, աղօթեց իւր սգակիր ընտանեաց համար, աղօթեց իւր համայն ազգայիններուն հոգւոյն փրկութեան հակար. աղօթեց զինք հալածողներուն համար, Ս. Ստեփաննոսի խօսքերովն. «Տէր մի՛ համարիր զոցա զայս մեղս» (Գործք Առաք. Է. 59), եւ Բրիտանոսի հետ՝ «Զի ոչ պիտեն զինչ գործեն» (Դուկ. ԻԳ. 34): Հետեւեալ առաւօտն որ էր Չորեքշաբթի, 22 Հոկտեմբեր, Տէր. Կոմիտասը առնելով, Ե

պարքոսարան տարին եւ հոն բանտարկեցին:

Եպարքոսարանը, ինչպէս վերը յիշատակեցինք, այն ժամանակները Թօփ-Գարու Սարայը ըստած տեղն էր, Այա Սօֆիայի վարի կողմը, Սարայ Պուրնը կոչուած նշանաւոր պարտէզի վերեւ, Զարպիսանէի կից, Այա կամ Սալթանաթ Բէօշկի ըստած արքայաբնակ հոյակապ պալատի մօտերը, եւ էր այն ատենուան Պապը Ալին:

Բանտին մէջ կային ուրիշ Կաթողիկէ Հայեր, եւ Եօթը նշանաւոր անձինք, որոնք կրօնական ինդիւիդներէ զատ, ունէին նաեւ քաղաքական յանցանքներ, որովհետեւ ասոնք տարի մը առաջ Եպարքոս Մէհմէտ Պալթաճիօրով, Աւետիք Պատրիարքը իր Կաթողիկէ կրօնքի դէմ ունեցած անհաշտ թշնամութեան եւ խիստ ֆեառակար զիտումներուն պատճառ. Գաղղիոյ զեպպան Ֆէրիոլի գործունէութեամբ արտրի տուած եւ անոր տեղ Մատթէոս Սարին՝ Սոյ Կաթողիկոսութենէն հրաժարել տալով Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռ բարձրացուցած էին եւ ժամէ ի ժամ կը սպասէին իրենց գլխատման վճռոյն: Ասոր ապացոյցը կը գտնանք Հ. Յովհ. Թորոսեանի Մխիթար Արքահօր վարքին 212րդ էջին մէջ, ուր կը պատմէ թէ Ֆէրիոլ Դեպպանը՝ Աւետիքին մէկ անպատեհ արարքին վրայ արդէն շատ գրգռուած ըլլալով, այսինքն թէ Աւետիքին՝ Գաղղիոյ Թաղաւորին առ զեպպանն ուղղած մէկ թուղթը, ընդդէմ կանոնաց միջազգային իրաւանց. բացած եւ կարդացած ըլլալը խմանալով, առթի մը կը սպասէր վրէժխնդրութեան եւ դիմելով Մէհմէտ Պալթաճը Եպարքոսի, զանի սոխպած էր որ արտրէ զԱւետիք, ինչպէս նոյն իսկ զեպպան Ֆէրիոլ կը պատմէ իւր նամակաց մէջ առ Լուդովիկոս ԺԳ. Աւետիքի ձերբակալումը եւ անոր գլխուն խաղցուած դաւը որ հետեւեալներն են.

«Մայիս, 6. — Աւետիք, այս հերետիկոս պապիարքը, որ մեղի այնչափ չարիք ըրաւ, վերջապէս ձեռքս ինկաւ: Պիտի տարուի նա ի Մարսիլիա, կը խնդրեմ խոնարհաբար Ձեր վեհափառութենէն որ բանտարկուի նա, մինչեւ որ տեղեկագրեմ Ձեզ անոր գործած բոլոր նենգութիւններն եւ ոճիրները, զոր պիտի ը-

հետ անյապաղ թողմամբն անուշով նաւապետին ձեռքով ։»

«Յունիս 1.— Աւետիք, Հատինաց բռնաւորը, որ կը հալածէր եւ կ'ատէր Հոռովմէական կրօնքը աւելի քան ուրիշ ո' եւ է դէն, եւ անխղճաբար կը գործէր ամէն եղեռն եւ չարութիւն, յետ ամբողջ կէտ ըլլալու եւ արտուելու, վերջապէս ձերքս ինկաւ. ես զինքը Գաղղիա տանել տուի, որպէսզի ընդունի այդ տեղ իրեն յանցանաց պատիժը։ Այս նկատմամբ տուի ես յառաջագոյն իմ հրահանգներս Քիոսի փոխ-հիւպատոսին, որ ամենայն կարելի փութով եւ ճարտարութեամբ ի գործ դրաւ։ Հարկ եղաւ կաշառել Աւետիքին ընկերացող պահապանները եւ ուրիշ դարաններ գործել, որոնք յաջողեցան, եւ Աւետիք քիչ օրերէն Մարսիլիա պիտի հասնի, եթէ զինքը տանող նաւապետը յեղեղակներէն չընտուի։»

Հոս տեղ վերոյիշեալ հեղինակը կ'ըսէ թէ այդ նամակին լուսնագիտութենէն կը հասկըցուի թէ Յէրիոլ դեսպանը անձնական կրքէ կամ վրէժխնդրութենէ չարած չգործեց այդ ձերբակալումը, այլ պարզապէս յօգուտ կրօնից եւ մանաւանդ Կաթողիկէ Հայոց։

(Շարունակելի)

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒՅԻՒՆԸ

Բ

1. Մարիամու Կուսին Ս. Յովսէփայ հետ ամուսնութիւնը։ 2. Փրկչին յղութիւնը, Ծնունդն ու աճուսնակոյնութիւնը։

(Մատթ. Ա. — 18—25)

(Շար.)

4. Հին եւ նոր հորց եւ վարդապետաց մէջ խնդիր է թէ ե՞րբ կատարուեցաւ Մարիամու եւ Յովսէփայ ամուսնութիւնը։ Շատերը կ'ըսեն (Ոսկեբերանի, Ամբրոսիոսի, Թէոփիլակտոսի եւ բազմաթիւ աստուածաբաններու հետ) թէ արդէն իսկ կատարուած էր երբ «զատ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»։ Եւ փաստ կը

բերեն Ս. Յովսէփայ արդէն իսկ այն Մարիայ անուանիլը եւ յղութեան ժամանակ իսկ Կուսին պատուոյն պահանջան հարկաւորութիւնը, եւն. այլք կը հաստատեն թէ ան ատեն միայն նշանուած էին եւ ի միասին չէին բնակեր. «մինչեւ եկեալ առ միմիան» եւ ճշմարիտ ամուսնութիւնը կատարուեցաւ երբ Յովսէփ տեսիլքէն վերջը՝ ըստ հրամանաց Տէրոջ հրեշտակէն «առ յինքն զկին իւր»։ Այս երկրորդ կարծիքը՝ որ եւ Որոգինէսէն, Ս. Բարսեղէն, Հիլարիոնէն, Եպիփանէն եւն. զատ, նորերը մանաւանդ ընդգրկած են, կը յեռու Աւետարանի խմբագրութեան ընթացքին, գրաւոր իմաստին, եւ նաեւ «խօսեցեալ» բառին վրայ, որ պարզապէս նշանակուած կը նշանակէ, յաշարէնի մէջ ալ. Ղուկ. Ա. 27. աւելի որոշ կ'ըսէ. «Կոյս խօսեցեալ առն»։

5.— «Գտաւ յղացեալ», այսինքն յղացած ըլլալը հրապարակաւ յայտնի եղաւ. ըստ ամենայն հաւանականութեան շուրջ երեք ամիս վերջը, այս է՝ երբ ի հաղարէթ վերադարձաւ Եղիսաբեթի այցելութենէն. Հմմ. Ղուկ. Ա. 36։ Մատթէոս Յիսուսի յղութիւնը, այսինքն հրեշտակին առ Մարիամ՝ աւետիս բերելուն եւ անոր հաւանելովը Բանին Աստուծոյ մարմնակալուն պատմութիւնը չհիշուեր. Ղուկասու մէջ կալ ան՝ Ա. 26—38. որու վրայ Աւետման տօնին առթիւ կրնանք խօսիլ, երբ Տէր կամենայ. Սակայն Մատթէոս իբրէնական հրաշալիք այդ յղութեան գործիչ պատճառը ցոյց կուտայ, «Յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»։ «Ի մէջ եւ ի մեր զանգուածոյ եւ ի կուսական արգանդէն էառ մարմին եւ ծնաւ. Բայ քէ որպիսի ինչ իցէ պայման ծննդեան, չէ ինչ յայտն։ Արդ մի ի խնդիր արեւել քննիցես, այլ ընկալ՝ զյայտնեալն եւ մի՛ քննե՛ր զընեալն։ Ո՛չ Գաբրիէլ եւ ոչ Մասթեոս աւելի ինչ կարացին ասել՝ բայց միայն եթէ ի Հոգւոյն է. իսկ եթէ զի՛արդ կամ որո՛վ օրինակաւ, ո՛չ ոք ի նոցանէ կարաց մեկնել, Բանգի անհնարին է...։ Քանզի բազում եւ այլ եւս իրաց եմք անեղեկագոյնք, քէ զիա՛րդ անբաւն ի բովանդակելի արգանդին. կամ որ զամենայն ընդ իւրեւ փակեալ ունի, յղանայցէ ի կնոջէ, կամ զի՛արդ ծնանիցի կոյսն եւ կոյս մնայցե՛» (Ոսկ. ճ. Գ.)։ «Ի Հոգւոյն Սրբոյ», Ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ Հոգւոյն աստուածային ստեղծագործիչ ազդեցութեամբ Ս. Կուսին Մարիամու սրբազնասարը արեւելէն կազմուեցաւ այն երանելի մարմինը եւ միացաւ նորոտտեղծ երանելի Հոգւոյն հետ, որոց միութիւնը առաջին վայրկեանին հետեւեալ յայտնեց կամ անձնաւորեց Որդին Աստուծոյ՝ Բանն Աստուծոյ, երկրորդ Անձը Ս. Երրորդութեան, այսպէս Ադամէն աւելի սքանչելագոյն եւ մարդկային ծննդեամբ կազմուելով ի մաքուր արգանդի Կուսին Մարդ-Աստուած յերկուս ընութիւնն եւ մի անձնաւորութեամբ, Յիսուս Քրիստոս Տէր մեր եւ Աստուած մեր։ Ամէն ինչ առաւ՝ ինչ որ մարդուն էր, ըսց ի մեղաց. Հմմ. Երբ. Է. 26։ Քրիստոսի ամենասուրբ հոգին գոյութեան եւ հետեւաբար Բանին Աստուծոյ հետ միաւորութեան առաջին իսկ վայրկեանին լի եղաւ

ամէն շնորհներով և իմաստութեամբ, և տեսաւ զԱստուած և գործածեց բանականութիւնը, և ճանչնալով իր միաւորութեամբ աստուածային Անձին հետ, գոհացաւ. գիտցաւ նաեւ թէ ինքն մարդ և Աստուած՝ պիտի մեռնի խաչին վրայ ի փրկութիւն մարդկան։ «Ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ. «Զգոհս եւ զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ... յայնժամ արացիք՝ անաւասիկ եկի... առնել զկամս քո Աստուած» (Եբր. Ժ. 5-7)։

6.— «Եւ Յովսէփ այրն նորա քանզի արդար էր»։ Ահա Յովսէփայ համար միակ գովասանքը զոր կուտայ Նոր Կտակարանը, բառ մը՝ արդար, որ կ'արժէ սակայն հասար մը։ Արդարութիւն կը բովանդակէ ամէն առաքինութիւն։ «Աս արդար՝ գրեալին առաքինին կոչէ» (Ոսկ.)։ Բայց արդար գիշաւորաբար կը նշանակէ երկիւղած օրինապահ. Եւ Յովսէփ «ի վերոյ քան զօրէնսն առաքինանայ» (Ոսկ.)։ Ահա այդ արդարը արժանացաւ այր կոչուելի Կուսի Մօրն Աստուծոյ և հայր կոչուելի Միածնոյ Որդւոյ Աստուծոյ։ Գլուխ եղաւ աստուածային բնութեանց, և ամէնքէն աւելի ի մօտոյ ծառայեց Մարդեղութեան և Աստուածամայրութեան, քան զհրեշտակս երջանկագոյն. և Քրիստոսի և Մարիամու հետ այս տեւական կենցաղավարութեամբ երկնաւոր խորհրդոց ու գաղտնեաց հաղորդեղաւ, ինչպէս նաեւ անմահ առաքինութեանց, որով և որբագոյն հանդիսացաւ Առաքեալներէն և նոյն իսկ Յովհ. Մկրտիչէն, ինչպէս կ'ըսեն Վարդապետք Եկեղեցոյ. «Եղիւ Կոյս անբիծ եւ այնու այր Մարեմայ» (Ս. Հերոն. Ս. Օգ.)։ Մայրն Աստուծոյ կոչեց զինքն այր և Տէր։ Ուրեմն նա կրցաւ իրօք հայր բուռի Յիսուսի՝ իրաւամբ ամուսնութեան. քանզի նա տէր էր իր օրինաւոր կնոջ, հետեւաբար և անոր զաւակին՝ թէեւ գերբնական կերպով ծնեալ. մանաւանդ որ Յովսէփայ առաքինութիւնն էր որ պահեց Մարիամու կուսութիւնը։ Եւ այն ու կինը ամուսնութեամբ կ'ըլլան իրր մի անձն քաղաքական և ամենայն ինչ ունին հասարակաց. ուստի Յովսէփ տէր է, հաղորդակից և բաժանորդ է այն ամէն բանի զոր ունի Մարիամը։ Ուստի Յովսէփ աւելի հայր է քան պարզապէս որդեգրող մը. և առ. Յիսուս ունեցաւ իբր հօր իշխանութիւն և գերագոյն սէր, և անհատնում խանդաղատանք, հոգ և ինամք. կերակրեց, պահպանեց, մարդեց զԱստուածորդին, և անոր մօրը կուսութիւնը պահեց. «Զի թէպէտ ի յոյժքինն ոչինչ եղեր նպաստ, քանզի անարատ եւ անմասնոյ մնաց Կոյսն, որ ինչ հօր սեպիակեան է՝ ինձմ ունել, եւ չապականել զպաշտօն Կուսութեանն, զայն քեզ յանձն արարից։ Զի թէպէտ էւ չէ քո ծնունդն, սակայն զտեղի հօր լնուցուս մանկանն» (Ոսկ. Ճ. Դ.)։ Եւ Յիսուս փոխադարձաբար յարգեց ու սիրեց զայն և հնազանդեցաւ անոր. «Եւ էր ՆՈՅՍ. հնազանդ» (Ղուկ. Բ. 51)։ «Եւ հնազանդութիւնդ այդ որպէս ցուցանէ ի Քրիստոս զանգին խնամարութիւն, այսպէս դրօժէ ի Յովսէփ եւ ի Մարիամ զանձամեմատելի արժանաւորութիւն» (Գերսոն)։

7. Արդ Յովսէփ, այր արդար, այսինքն առաքինի յոյժ և օրինապահ, յանկարծ վրդովեցաւ տեսնելով որ իր կոյս և անբիծ ամուսինը կամ նշանածը, որուն կուսութիւնը անարատ պահելու համար ինքն ալ մշտնջենաւոր կուսութեան ուխտիւք զինքն պարտաւորած էր, ինչպէս կ'ըսեն Ս. Հարք, յղացածի վիճակ մը ունենալու սկսած էր։ Հոգեկան և դառն էր Յովսէփայ այս վարժուէքը, ոչ կ'ապականէր կամ չար կարծիքէ յառաջ եկած, այլ անիմանալի առեղծուածի մը առջեւ գտնուելու վիճակ մը, որ չի կրնար ըսել այն՝ կամ՝ ոչ։ Մարիամու ինչ առաքինութիւն ունենալը քաջ գիտնալով աւելի ևս սքանչացած, միտքը առկառն մնալով ապշած էր։ Աւետարանիչը այս վիճակը քաջ կը նկատէ ըսելով «խորհեցաւ», «Միկնչեաւ նա զայս անձր զմտաւ», այս է, երբ մտքին մէջ վեր վար կը դարձնէր և գեռ. որոշողութիւն մը չէր տուած։ Այնքան առաքին շարժումն էր, որ և ոչ իսկ Մարիամու բան մը հարցնել մտաբերեց։ Այլ շուտով զՄարիամ առաւ նշաւակի ընել, դատարանի միջոցաւ արձակելով ըստ օրինի, կը խորհէր դադարի արձակել թէեւ դարձեալ ըստ օրինի ապահարգանքի գիր տալով անոր. այս ամէնքը սակայն առաջին մտաւորական վիճարանութիւն մըն էր միայն, անպատճառ միեւնոյն ատեն պաղատելով Աստուծոյ որ հաճի լուսաւորել զինքը և առաջնորդել իրեն։ Եւ լսելի եղաւ։

8. Քանզի անա յանկարծ և գերբնական կերպով Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն երկնաւոր տեսիլքի մը մէջ, մեկնելու համար այս հրաշալիքը և փարատելու իրեն միտքը տանջող վարանմունքը։ Տիրոջ հրեշտակը նոյնպէս անակնկալ կերպով Արքայհայտն տաւ իր Մարիայի խոստովին աւետարտ. Յովսէփու կ'աւետէ եղած, կատարուած բան մը, տեսիլքի մէջ, և ոչ «Յայն յանդիման, քանզի յոյժ հաւատացեալ էր այրն, չէր ինչ պիտոյ երեսաց յանդիմանաց» (Ոսկ. Ճառ. Դ.)։ Տեսիլք երկնաւոր Ս. Գրոց մէջ ստեղծ կը յիշուի. ինչպէս Յովսէփ Նահապետին երազները (Մհն. ԼԷ, 5, 50) ևն.։ Զարմանալի է որ Յովսէփ Աստուածահայր մարդկ վարքը որ Մատթէոսի Աւետարանին մէջ յիշատակուած ըլլայ, կը բովանդակի չորս տեսիլքներու մէջ միայն, որոնց կը հետեւին չորս կատարեալ հնազանդութեան գործեր (Ա. 20, 24.— Բ. 43, 44.— 49, 21.— 22, 23)։ Իսկ Ղուկասու Աւետարանին մէջ նոյնպէս հնազանդութիւն երկրաւոր կայսեր հրամանին (Բ. 4) և ծառայութիւն խոնարհ Մարիամու և Յիսուսի (տնդ. 46.— 22.— 33.— 39.— 44, 44. 45, 48), որ փոխանակուեցաւ Մարիամու և Տիրոսի հնազանդութեամբ — Յովսէփու՝ իբր երեւց գիշաւորին։

(Շարունակելի)

Գ. Վ. ԹԵՐԶԻՊՈՒՆԵՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԸՍՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՅ ՀԱՎԱԿԱՅՈՂՆԿԷ ԱՐԱՐՔԻՆ ԱՌՅԻ

(Շար. եւ վերջ)

Ռ

Հիմա զանք Գր. էֆ. ի իւր արարքին վրայ իր տուած մեկնութեան պատասխանելու : Կը պարտիմ դիտել տալ որ վարչական ըս-
ուած ժողովը Գր. էֆ. Ոսկեանին այդ պա-
տասխանագիրը կարգացեր է եւ անոր հաւա-
նութիւն յայտնէր է. այդպէս կ'ըսէ իրենց թեր-
թը : Այդ ժողովը ալ ուրեմն իր մտաւորական
չափը խոստովանած կ'ըլլայ : Յետոյ, զարմա-
նալիք բան, ի՞նչ ձեռնհասութիւն ունի այդ
ժողովը աստուածաբանական խնդիր մը յու-
զելու եւ լուծելու : Ի՞նչ ժողով, ի՞նչ աստ-
ուածաբանական կաճառ . մեծ Մանհեսթին մը!,
Հա՛րկա՛ւ, անոնք որ կը յանդգնին խորանի
դէմ խորան կանգնելու, զուտ եկեղեցական
խնդիրներու խառնուելու, հերձուած մը կազ-
մելու — թէ եւ անկերպարան, — բնականա-
բար ամբարտաւանօրէն գիրենք վճռատու
աստուածաբաններու տեղն ալ պիտի դնեն,
կարծես թէ Քրիստոս իրենց տուած ըլլար ու-
սուցանելու իշխանութիւնը : Հոգեւոր ապրա-
տամբութեան ու անհնազանդութեան վախ-
ճանն է այս . Աստուծոյ պատիժն է . մոլորու-
թիւնը՝ յումմէ եւ իցէ, չկրնար պաշտպա-
նուիլ առանց իայտառակուելու : «Եթէ ո՛ր
այլազգ ինչ ուսուցանիցէ, եւ ոչ անսայցէ ողջ-
մտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, այնպիսին հպարտացեալ է, եւ ոչինչ ոչ
գիտէ, այլ տալի ի խնդիրս եւ ի բանս հա-
կառակութեան» (Ա. Տիմ. Ա.) : Ահա ասոր
համար է որ նոյն ինքն Գր. էֆ. իր գրու-
թեան մէջ աւելի հեղինակօրէն ուսուցանե-
լու ձեւեր կ'առնու, եւ կ'ըսէ թէ պատրաս-
է աստուածաբաններու վճիռը ԼՍԵԼՈՒ . մինչ-
դեռ պէտք էր ըսէր լսելու, սորվելու եւ
հնազանդելու : «Լինիջի՛ք առնելիք բանին եւ
մի՛ լսելիք միայն» (Յակ. Ա. 22) :

Արդ տեսէ՛ք թէ աս նորեկուկ վարդապետ-

ները ո՛րքան կը մոլորին իրենց վարդապե-
տութեանց մէջ . «Զի ի բանից բոց արդա-
րացիս եւ ի բանից բոց պատրաստեցիս»
(Մատթ. ժ. 37) : Գր. էֆ. պանծալով
կ'ըսէ թէ, ես չեմ հասկըցած իր միտքը եւ ի
չարն մեկներ եմ իր գրուածը թէ՛ «ի սրէ կը
մաղթէ արժանաւոր յաջորդ մը Ս. Յովնան-
նու Ոսկեբերանի քափուր Արողոյն» . Ի՞նչ է
եղեր իր բուն խմատը . այն է՝ եղեր՝ մաղթել
ճշմարտապէս ուղղափառ յոյն պատրիարք մը,
որ Ս. Յովնաննու Ոսկեբերանի Աթոռսն ի-
րական յաջորդն ըլլայ եւ յոյն հերետիկոս եկե-
ղեցին միացնէ Հռոմայ Եկեղեցւոյն հետ : Շա-
տեր, ի մէջ որոց նաեւ իրենց բարեկամներէն
ունանք, ինծի հաւատացին թէ այս մեկնու-
թիւնը չուարման վայրկեաններու մէջ յերիւ-
րուեր է՝ սխալը եւ մոլորութիւնը պարտկե-
լու համար եւ ասոր իբր ապացոյց կը բերէին
ժողովին ալ այս մասին խորհրդակցելու եւ
տրուելիք պատասխանը տեսնելու եւ վաւե-
րացնելու փութալը : Բայց եւս կ'ուզեմ հաւ-
ատալ Գր. էֆ. ի անկեղծութեան : Սակայն
եւս ալ անկեղծօրէն կ'ըսեմ թէ այդ մեկնու-
թիւնը չատ աւելի դժբախտ վիճակ մը
կը ստեղծէ իրենց համար : Քանի որ մէկը
չուզեր խոստովանիլ իր սխալը, մեծագոյն
սխալ մը կը գործէ : Հիմա տեսնենք ուրեմն
տրամաբանական ու աստուածաբանական
պատճառներն որոնք կը ջրեն ու կը ցրեն
այդ մտացածին մեկնութիւնը :

1. Եւ նախ եւ առաջ անվիհներ կը հաս-
տատեմ թէ տուեալ պարագայից մէջ ո՛չ ոք
կրնայ այսքան խորին, ծածկուած, անբնա-
կան, անհարկի եւ խորթ մեկնութեան մը
թափանցել . երբ մէկը «ի կողմանէ ժողո-
վրդեան եւ ժողովոյ (այն ալ բանադրեալ եւ
հերձուածող) կ'երթայ, ԽՈՐԻՆ ՅԱԻԱԿՑՈՒ-
ԹԻԻՆ կը յայտնէ յոյն ազգին այն ԴԱՌՆ
ԿՈՐՍՏԵԱՆ համար զոր աւնեցաւ նա յանձին
նորին ՍՐԲԱՋՆՈՒԹԵԱՆ . . . իւր ՄԵՐ Պատ-
րիարքին, եւ կը հայցէ հոգւոյ ՆՈՐԻՆ հան-
գիստ յաւիտենական, եւ կը յաւելու թէ
ի սրէ կը մաղթէ Ս. Յովնան Ոսկեբերանի
ԹԱՓՈՒՐ Աթոռոյն արժանաւոր ՅԱՋՈՐԴ մը»,
եւ յասպարէզ կը կարգած աշխարհիս ամէն

քերականներն ու գրադէտները՝ Գր. էֆ. ի եւ ժողովոյն տուած այս վերջին մեկնութիւնը հասկնալ կարենալու համար, ինչպէս կ'ուզուի աննախընթաց կերպով բռնագրօսելով. ինչ հարկ կամ պայտանութիւն կար պարզ ցաւակցական այցելութեան մը առթիւ այսօրայն խրթին, մտակեղեք, ո'չ ումեք մատչելի եւ անիմանալի բառեր շարել քովէ քով որոնց պարզ եւ բնական իմաստը բոլորովին տպրեր բան կ'ըսէ. եթէ տրամաբանութիւն չկայ, զոնէ պարզ քերականութիւնն ալ մէկդի նետելով ծաղրելի ըլլալու չէ:

2. Նոյն իսկ, անկարելին ենթադրելով, եթէ վայրկեան մը ընդունինք այդ տրուած մեկնութիւնը, անիկայ բնաւ ուղղափառ չէ պարագայից բերմամբ, անիկայ աստուածաբանօրէն այնքան ապօրինաւոր է, որ բնական իմաստով իմացուած մոլորութեան հետ կը նոյնանայ: Որովհետեւ քանի որ այսքան պատի պատ անիմանալի մանուածներու մէջ թաքուն է, եթէ պարզապէս խաբէութիւն չէ, շատ շատ պիտի ըլլայ աստուածաբանական Մատուական սեղմում կամ ամփոփում (Retsriction mentale), որ է՝ «Գործ մեաց որ խօսքի մը բառերը հասարակ ու բնական եղող իմաստէն՝ ուրիշ իմաստի կը խեղափուրէ կամ կ'ամփոփէ»: Պարզապէս մատուական սեղմում է՝ երբ այդ իմաստը բնաւ կարելի չըլլայ հասկնալ. ընդարձակօրէն մատուական է, եթէ պարզապէս կարելի ըլլայ կոհնել: Արդ աստուածաբանութիւնը կ'ըսէ թէ ՈՁ ԵՐԲԵՅ օրէն է գործածել պարզապէս մատուական սեղմում իսկ քնդարձակօրէն մատուական սեղմում կրնայ թոյլ տրուիլ միայն արդարացի պայտանով եւ մարդկային ընկերութեան մեծ բարիքի մը համար. այլ ոչ երբեք ներքին է երբ լսողներն անտի ու եւ մեծ մը կրնն. երբ ի պաշտօնէ կը պարտինք ուրիշին ըսել ճշմարտութիւնը եւն. Արդ կրնայ իւրաքանչիւր ոք դատել այս սկզբունքներու համաձայն թէ ո'րքան անհեթեթ եւ ապօրինաւոր է Գր. էֆ. ի մատուական սեղմումը, եթէ կար:

3. Մարդ իւր հաւատքը կը պարտի

ԱՄԷՆ կասկածանքէ վեր բռնել. անոր համար հաւատոյ դաւանութիւնը պարզ եւ յայտնի պիտի ըլլայ. ո'չ առ երկիւղի՝ նոյն իսկ մահուան, ո'չ առ ամօթոյ, ո'չ առ շահու կամ ամպարհաւած աչառութեան կամ մարդահաճութեան, ներեալ չէ հաւատոյ դաւանութիւնը տարակուսանաց տակ վտանգել. բնաւ ներքին չէ ուրիշ կրօնքի դաւանական ձեւեր առնուլ՝ տարակուսական կամ երկդիմի գործերով կամ խօսքերով (actus protestativi): Զայդ կ'ուսուցանէ Ս. Եկեղեցին՝ յենլով Յիսուսի եւ Առաքելոց բացայայտ խօսքերուն. Հմմ. Մատթ. Ժ. 32. — Դուկ. Թ. 26. եւ Հո. Ժ. 10: Բոլոր Հարք եւ աստուածաբանք այսպէս կը սորվեցնեն: Ուր մնաց եթէ խօսքերուն առաջին եւ բնական իմաստը տարակոյս ալ չթողու դաւանութեան մոլորական ըլլալուն վրայ:

4. Այլ զայս գրովն ո'չ միայն տարակոյս կը թողու իր դաւանութեան ուղղափառութեան վրայ, այլ եւ անտարակոյս դաւանած կ'ըլլայ — զոնէ՝ նիւթաբար — ոչ ուղղափառ կրօնքը, այն ոչ-ուղղափառները բացարձակապէս գայթակեցուցած ըլլալուն համար: Յաճախ գայթակղութիւն բառը սխալ իմաստով կ'առնուի, կը կարծուի թէ մէկ մը մի միայն դայթակղութիւն կուտայ երբ իր մեղանչելը ուրիշներուն կը ցուցադրէ կամ ըստ պատահման կը յայտնէ: Մինչդեռ գայթակղեցնել է՝ իր մեղքին կամ գործոյն պատճառաւ ուրիշները՝ նոյն մեղքի մէջ իյնալու հրաւիրել կամ վտանգին մէջ դնել: Ասոր համար է որ մանաւանդ հեղինակաւոր կամ բարի կարծուած մէկուն յայտնի մեղքը, անհաղանդութիւնը, չար խրատները, եւն. մեծ գայթակղութիւն են, որովհետեւ ուրիշները, գլխաւորաբար փոքրիկները՝ տկարները, յողորմեցնելը նոյն մեղքի, նոյն անհաղանդութեան եւն. մէջ իյնալու առիթ կ'առնուն կամ կը խրախուսուին: Բաց աստի, նոյնքան մեծ գայթակղութիւն է երբ մէկը այնպիսի խօսքեր զրուցէ կամ գործեր ընէ, որ անոնցմէ մեղաւորը կամ մոլորեալը յորդորուի իր մեղքին կամ մոլորութեանը մէջ մնալու. զ. օ. եթէ հերձուածողներուն,

բանագրեալներուն, հերետիկոսներուն խա-
խոյս տայ մէկը բանիւ կամ գործով, եւն. :
Արդ ներկայ պարագայիս մէջ պէտք է նախ
դիտել թէ, աշխարհիս վրայ ո՛րչափ յոյն
կայ, Գր. էֆ. Ոսկեանին այդ պարագանե-
րու տակ պրած այդ կտորը անպատճառ
պիտի հասկնայ բնական իմաստովը, այսինքն
թէ հիմակուան յոյն պատրիարքական աթոռը
Ս. Յովնան Ոսկերեքանին Աթոռն է, եւ այս
նոյն իսկ ուղղափառ Կաթողիկէի մը բացա-
յայտ եւ արձանագրուած դաւանութեամբ.
եւ ահա մեծապէս գայթակղեցան, այս է՝ ի-
րենց հերետիկոսական մոլորութեան մէջ կա-
թողիկէի մը առաջնորդութեամբ հաստատու-
եցան բոլոր յոյները, հետեւաբար նաեւ
բոլոր ուրիշ հեթանաւորները։ Եւ պէտք է
դիտել նաեւ թէ առանց աս գրուածքին լա-
րիւրինթոսական կամ առեղծոքածական ինք-
նահար մեկնութիւնը — իթէ կար, — ընդեր-
կար բացատրելու՝ զայն զժբախտ նոյնու-
թեանմը հայերէն լեզուաւ հրատարակու-
թեան տալով, ահա գայթակղեցան ամէն
հայ կաթողիկէ կարգացող ու լոռներն ալ։
Եւ ինչպէս ոչ, երբ նոյն ինքն Գարտաշեան
էֆ. եւ իւր ընկերք իսկ գաղթակղած էին,
նախ քան այդ յիտասանար կամ անհարկի եւ
չատ ուշ մնացած մեկնութեան հայթայթուի-
լը. այո՛, Գարտաշեան էֆ. Ոսկերեքանի
սրահին մէջ, նոր տոմարի աւթիւ եղած
հաւաքման մէջ, ԱՌԱՋԻ ԲԱՋԱՄԱՅ պախա-
րակած է Գր. էֆ. Ոսկեանի այդ արարքը,
բողոքած է անոր դէմ, յայտարարած է թէ
վարչականի մէջ (!!) ալ պիտի բողոքէ, եւ
հաստատած է թէ Կ. Արձագանգ ԿԱՏԱՐԻ-
ՆԱԳԷՍ ԻՐԱՆՈՒՆԻ ՈՒՆԻ իւր քննադատու-
թեան մէջ։ Այդ դէպքը անհերքելի ստու-
գութիւն մըն է։ Բայց ապա ա՛յն վարչա-
կան ժողովոյ մէջ, ուր ամէն ճշմարտութիւն
կը խղուի, հաւանութիւն յայտնուեր է այս
յերիւրածոյ եւ կազն ի կազ տրամաբանու-
թեանով. «Այլ բանն Աստուծոյ ոչ երեկապ-
եալ իցէ» (Բ. Տիմ. Բ. 9)։ Ս. Եկեղեցին
չատ տեսած է եւ փշրած՝ այսպիսի ճղճիմ
հակառակութիւններ։ «Որ բնդհարցի բնդ
վիշն բնդ այս, խորակեցի» (Ղուկ. Ի. 18)։

5. Այնչափ ստույգ է այս ամէնը, որ
եթէ յերիւրուած այդ քմածին եւ անտեղի
մեկնութիւնը ընդունելի ըլլար, այլեւս լայն
եւ արձակ ճամբայ մը բացուած պիտի ըլլար
դատապարտելի անխորականութեան թէ՛
խօսքերու թէ՛ գործերու մէջ. ա՛լ ամենուն
կարելի եւ անվնաս պիտի ըլլար ո՛ր եւ իցէ
կրօնքի հետ հաղորդակցութեան մտնել, բա-
ւական է որ ծալ ի ծալ մոռաւորական սեղ-
մումներով մեկնուի. ամէն բան օրինաւոր
պիտի դառնար։ Նրանքի Տէր Կոթիտաս շատ
դիւրաւ աղատուած պիտի ըլլար ֆլխատու-
մէ... Այսքան անհեթեթ արդիւնք եւ հե-
տեւութիւն ինքնին կը ցայտեցնէ այդ ինք-
նահար վարդապետութեան անհեթեթու-
թիւնը։

Պէտք է դիտել նաեւ թէ Եօաքիմ Գ.
պատրիարքը Գր. էֆ. ի կարծածին պէս չաշ-
խատեցաւ միութեան եկեղեցեաց. ես իրեն
հետ յայտմ՝ մասին խօսակցութիւններ ունե-
ցած եմ անձամբ. նա իր միշտ անջատողա-
կան տեսակէտներն ունէր. եւ այս այնչափ
ստույգ է որ ամէնքը պէտք է յիշեն թէ նոյն
պատրիարքն էր որ ջանաց միեւնոյն ժամա-
նակ միացնել յոյն եկեղեցին նաեւ... բողո-
քականաց հետ։ Եւ եթէ՛ այնչափ ուղղա-
փառամիտ էր, ինչո՞ւ ինքը չզարձաւ զոնէ,
իր հոգին փրկելու համար։

Երկրորդ կէտին մէջ ալ նոյնպէս կը
սխալի Գր. էֆ., որովհետեւ ուղղափառ
Եկեղեցիէն դուրս գտնուողներուն համար
թէեւ կ'աղօթէ Ս. Եկեղեցին, սակայն ա-
սիկա անոնց դարձին համար է. եւ վախճա-
նիւց համար թէեւ բոլորովին առանձնական
ու թէական աղօթք թոյլ տրուած է, սա-
կայն բացառականապէս արգիլուած է պաշ-
տօնական եւ հրապարակական աղօթք։

Ասոնք Եկեղեցւոյ կանոններն են. եւ
զեռ աշխարհագրաներ կը կանգնին մեզ սոր-
վեցնելու... բողոքովին հակառակը։ Ո՛վ
Առաքեալ, ի զո՞ւր ըսիր ուրեմն. «Մի՛ բա-
զում վարդապետք լինել, եղբա՛րք, գիտաս-
ջիք զի մեծ դատաստան ընդունելոց եմք»
(Յկր. Գ. 1)։

Ահաւասիկ կարճ ի կարճոյ այն աստուա-

ծարանական պատճառները որոնցմով կ'ապացուցուի թէ Գր. էֆ. ի կողմանէ իւր դաւանաբանական ապօրինաւոր գործոյն համար հնարուած մեկնութիւնը ինքնին կ'իյնայ ո՛չ միայն իբր անընդունելի, այլ նաեւ իբրեւ նո՛յնքան ապօրինաւոր, եւ միեւնոյն յոռի եւ դատապարտելի արդիւնքն արտադրող: Հետեւաբար Նմանութիւն Յիսուսի ոսկեմատեանէն յառաջ բերուած վկայութիւնը — (Նքէ ի ներքոյ լինելի բարի եւ մաքուր, եւն.) — հոս չգօրեր, քոյրորովին անարժան եւ մեղաւոր ըլլալով հանդերձ, ինչպէս կը խոստովանիմ, — քանզի՝ «Նքէ ասիցեմք եքե ոչինչ մեղաք, սուս առնեմք զնա» (Յովհ. Ա. 10) . սակայն ճշմարտութիւնը բնաւ կախում չունի ըսողին անձնական ապախտիքէն կամ արժանիքէն, որ միմիայն Աստուծոյ գիտնալու բանն է. բայց կիրքը, որ չուզեր լսել ճեմարտութիւնը, միշտ զայն ըսողին անձին դէմ կը զինուի, կարծելով որ զայն անուանարկելով, ճշմարտութիւնն ալ կրնայ լռեցնել, ճշմարտութիւնը՝ որ յաւիտենական է, որ ինքն Քրիստոսն է: Նոյն իսկ անարժան ըլլալով, որովհետեւ պաշտօնեայ կարգուած եմ մեր Տէրն Քրիստոսէն, պիտի ըսեմ ճշմարտութիւնը, անլռելի բերնով, ամենուն. «Քանզի յունաց եւ բարբարոսաց, իմաստնոց եւ անմեղ պարսապան եմ. զի ոչ եք ամօք ինչ համարիմ զաւետարանն» (Հռ. Ա. 14, 16) . եւ այս՝ որպէս զի պարտքս կատարելով, առանց մարդահաճութեան, պատասխանատու չմնամ առաջի ահաւոր Դատաւորին՝ իբրեւ քանքարաթագոյց եւ խոտան ծառայ, եւ որպէս զի կարենամ յուսալ թէ՛ զթալով իր այս ամենայնեայն եւ ամենատրուալ գերւոյն վրայ, Տէր Յիսուս իր ողորմութեան մէջ ընդունի եւ զիս: Ուստի քահանայն ի պաշտօնէ ուսուցանողն ու պաշտպանն է ճշմարտութեան, որպէս զի չկարծեմ ոք սուս առնել զճեմարտութիւն, եւ որպէսզի «ճեմարտութեան ճանապարհէն մոլորած մեկը եքէ կարող ըլլայ դաքձի բերել, զիսացէ, զի որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, Փրկեմք զՍոմ ԶՈԳԻ ԻԻՐ Ի ՄԱՀՈՒԱՆԷ, ԵՒ ՃԱՐԿԵՄՏԷ ԶԲԱՉ-

ՄՈՒԹԻԻՆ ՄԵՂԱՅ» (Յակ. Ե. 19, 20): Եւ այդ պարտքը կատարելէն պիտի չկատեցնեն զպարտաճանաչ քահանայն՝ ո՛չ երկիւղ, ո՛չ նախատինք, ո՛չ յարձակում, ո՛չ կորուստ, ո՛չ հալածանք, նա պիտի պաշտպանէ ճշմարտութիւնն ու կրօնքը եւ անոր սրբութիւնները՝ ամենուն դէմ եւ ամէն զնով, մահու չափ իով. այսպէս արիացան նահատակեցան մեր Հայրերը: Թո՛ղ հալածուինք, նախատուինք, անուանարկուինք նոյն իսկ մեր սիրելիներէն, բարեկամներէն, ազգականներէն. հոգ չէ՛. Քրիստոս Տէրն մեր նախադուշակեց մեղ զայս, զի ըսելէն վերջը թէ՛ «Միեւնոցն զձեռն իւրեանց ի ձեզ՝ եւ հալածեցեն, մասնեցեն ի ժողովուրդս եւ ի բանսս, եւ ցանիցեն առաջի դատաւորաց» (Ղուկ. ԻԲ. 12), քիչ վերջը (անդ. 16) կը յարէ. «Մասնեցիք եւ ի ճնողաց եւ լեղբաց եւ յազգականաց եւ ի բարեկամաց»:

Այս ամէնը խորհելով բնաւ կարեւորութիւն չեմ տար Ոսկեան Գր. էֆ. ի նախատանաց երկրորդ տեղատարափին, որ կը վերագրէ ինծի նենգաւոր միտք, չարակամութիւն, անգութ խեղաթիւրում, անտեղի, անհիմն եւ յանդուգն վերագրումներ, եւ թէ ՃԳՆԱՆՐ ըլլամ զինքն առատաւորել. ասոնք ալ անուշադիր սայթաքումները կը համարիմ իւր գրչին: Միայն կը մխիթարուիմ յիշելով Սիրաբայ Զ. Գլխոյն, եւ Ն՛Դ. Սաղմոսին 13-15 համարներուն խօսքերը:

Իսկ ընդհանրապէս ի հոգեւորս հաղորդակցութեան մասին կ'ըսեմ՝ 1. Թէ Կաթողիկէ Ս. Եկեղեցին իր կանոններն ունի՝ որոնցմով բացարձակապէս կ'արգելու զայդ. մենք այս կանոններէն գլխաւորները պիտի դնենք Արձագանգի մէջ, բայց դժբախտաբար տեղւոյ անձկութիւնը ու կարեւոր նիւթերու առատութիւնը ցարդ չթոյլատրեցին մեր այս փափաքը կատարել: 2. Չկայ ո՛չ իշխանութիւն ո՛չ անձ մը որ կարող ըլլայ թոյլ տալ ինչ որ Ս. Եկեղեցին արգիլած է, կամ օրինաւոր գործել ինչ որ ան ապօրինաւոր հռչակած է: — 3. Ուստի եթէ կայ մէկը աշխարհական, քահանայ, եպիսկոպոս կամ նոյն ինքն պատրիարք, որ այս կանոնաց

դէմ գործած ըլլայ, կամ պիտի բռնե՞ք որ Օրինաւոր Դերագոյն իշխանութենէն հրաման առնելով ըրած է, որ շատ բացառիկ պարագաներու համար ինչ ինչ զիջողութիւններ կ'ընէ ինչպէս պիտի տեսնենք իր տեղը երբ հրատարակենք այդ կանոնները, եւ կամ պիտի բռնե՞ք առանց այլեւեւ թէ՛ ՍԽԱԼԵՐ է, ո՛վ որ ալ է. աս ալ մարդկային է, անհատները անխալ չեն. ո՛վ պիտէ թէ Դերագոյն իշխանութենէն նոյն իսկ յանդիմանութեան արժանի եղած չըլլայ: Կրնայ այնպիսին այդ սխալին վրայ ստորջնալով՝ ուղղել զայն, եւ այս՝ քաջութիւն է եւ օրինակելի առաքինութիւն. կրնայ յամառիլ մնալ անոր մէջ, եւ այս՝ Ս. Եկեղեցւոյ դէմ ապստամբութիւն է, որ կը տանի մինչեւ ցնեքծուած եւ հերետիկոսութիւն: Ո՛չ, պէտք չէ ըսել թէ սխալական մարդը սխալելէն վերջը պէտք է սխալը կրկնէ, կամ թէ՛ այդ առանձնական սխալը՝ կարող ըլլայ ջնջել ընդհանուր օրէնքը որ բարձր է քան ո եւ է անհատ, եւ կամ թէ՛ այդ սխալը՝ այլոց սխալին օրինակ կամ արդարացուցում կարենայ ըլլալ. եւ կամ այս՝ պատճառանքներով թող տրուած ըլլայ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ եւ ՀՐԱՄԱՅՈՂ հոգեւոր Պետին անսաստել. ասոնք բոլորը անձնասէր եւ կամապաշտ մարդոց բարութանքն են որոնցմէ վախնալով Սաղմոսերգուն, կը հայցէր Աստուծոյ. «Դի՛ր, Տէր, պահապան բերանոյ իմոյ, եւ դուռն ամուր շքանց իմոց, զի մի՛ խոսորեսցի սիւրս իմ բանիւ չարութեան, պահապան զպահապան մեղաց ընդ մարդս որ գործեն զանօրէնութիւն, ոչ եղեց կցորդ ընտելեաց նոցա» (ձե. 3-4):

Սակայն չաւարտած պէտք է — գո՛նէ միանգամ — ամբողջութեամբ կատարեմ իմ պարտքս Դր. էֆ. ի եւ նաեւ ի՞նչ գործակիցներուն հանդէպ, ինչպէս ըսի պարտքս՝ թէ քահանայութեան թէ՛ բարեկամութեան «Զի քեբեւս ապրեցուցից զովմանս ի նոցանէ» (Հո. ժա. 14): Միայն այդ յանցանքը յանձնէ քերելով չէ որ կարելի է արդարանալ իբրեւ կաթողիկէ, այլ հարկ է կատարելապէս գալ յուղղութիւն: Ասիկայ մեծամեծ սխալներուն

մէկ հատն է միայն: Շատ պահծալ իւր բաթութեան վրայ՝ կը յիշեցնէ վարիսեցւոյն առակը, որ անարժան գտաւ. լաւագոյն է մաքսաւորին պէս մարդ իր կուրծքը բախէ եւ ըսէ. «Ասուած, քաւեա՛ զիս զմեղաւորս» (Ղուկ. ժԸ. 10-14): Պէտք է սարսափինք Աստուծոյ դատաստաններէն եւ գայթակղութիւն տալէն: Ի՞նչ կ'արժէ սնդիկ գրել խօսիլ թէ կաթողիկէ եմ, երբ գործերը զայդ առաւ կը հանեն:

Միտքս կը կեղեքէ Յակոբայ Առաքելոյն (բ. 10) այն խօսքը թէ՛ «Որ ո՛ր զամենայն օրէնսն պահիցէ, եւ միով իւրի՛ ինչ գրիցէ, եղեւ ամենայն օրինացն պարսապանս»: Որպիսի՞ թշուառ ու դատապարտելի վիճակ մը ունի այն հաւատացեալը՝ որ իր հոգեւոր Պետին անհնազանդ եւ ապստամբ է ամէն բանի մէջ՝ մինչեւ իսկ Եկեղեցւոյ եւ հոգեւորական իրաց մէջ, եւ զանիկայ կը դատէ կը դատապիտէ, եւ իբր թէ՛ խորանի գէմ խորան կանգնելով իբրեւ Կորն, եկեղեցական գործոց մէջ միջամուխ կ'ըլլայ՝ իբրեւ անտեսող եւ դատաւոր, եւ կաթողիկոսական Կոնգակներու դէմ Շրջաբերականներ կը յօրինէ ու կը ցրուէ՝ իշխանութիւնը յափշտակելով, ու ժողովուրդը եկեղեցիներու մէջ ապստամբութեան ու սրբապղծութեան կը զրգոէ. — այն հաւատացեալը՝ որ կը նախատէ ու կը խայտառակէ իր հոգեւոր Պետը, Եկեղեցւոյ իշխանը, եւ նախատել ու հալածել կուտայ եւս ներք գաւառներու մէջ. ու այս ամէնը հակառակ Քրիստոսական սպանալեաց թէ՛ «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ», եւ հակառակ Առաքելական յայտնի պատուէրին թէ «Ունկնդիր լերո՛ւմ առաջնորդաց ձերոց եւ հպասակ կացե՛ք նոցա»: — Որպիսի՞ արգահատելի վիճակ մ'ունի այն հաւատացեալը՝ որ Եկեղեցւոյ Դերագոյն եւ Անխալ Դիւան, Քրիստոսի Փոխանորդին՝ Ս. Քահանայապետի բացարձակ հրամանաց այլընդալոյ եւ ինքնահաւան մեկնութիւններ տալով եւ քննադատութիւններ բարդելով՝ յայտնի կ'անաւատէ, Անոր բանադրանքը յնչպէս կը քերէ ամբարտաւանութեամբ, Անոր տուած բացարձակ վճիռներուն առթիւ՝ զԱնի կ'արհա-

մարհէ իրր խաբուած եւ քրածը չգիտցող, կը սորվեցնէ Անոր վարելու եւ դատելու կերպեր, կամ սորվեցնողներուն կը գործակցի, Անոր սիրտը ցաւով կը լեցնէ: — Որպիսի՞ ողբացի վիճակ ունի այն հաւատացեալը՝ որ այսքան երկար ժամանակ կը մնայ բանազրեալ եւ զրկուած Ս. Սորհուրդներէ, Ս. Հաղորդութեան միութարութիւններէն, Ս. Եկեղեցւոյ ու Սրբոց հաղորդութիւնէն: — այն հաւատացեալը որ ո՞վ դիտէ ո՞րքան մօտալուստ ապագայի մը ահաւոր պատահականութիւններէն չտարտի: — այն հաւատացեալը՝ որ առհասարակ կը գայթակղեցնէ փոքրկունքը, իր այս արարքներով, եւ՝ ի մասնաւորի, իր բարի հաւատացեալի համբաւով: — Որչափ ցաւալի վիճակ ունի այն հաւատացեալը՝ որ կը գործակցի ապոստամբներուն, անոնց խորհրդակից կ'ըլլայ ամէն տեղ ու ամէն ատեն: Աստուծոյ իրեն առատաձեռնած ձիրքերը ապստամբութեան ու մոլորութեան ի ծառայութիւն կը գնէ: — այն հաւատացեալը որ պաշտպան եւ գործակից կ'ըլլայ հոգեւոր Պետր նախադասօք ծածկողներուն, հայնոյողներուն, թուք ու մուրով անոր վրայ յարձակողներուն, եկեղեցւոյ ինչքերը յափշտակողներուն, Ս. Սեղանը եւ անոր վրայ բազմող Քրիստոս Աստուածը արհամարհելով հոն՝ ի տաճարին Աստուծոյ, քահանայից վրայ աղաղակաւ յարձակող տաճարապիղծներուն: — այն հաւատացեալը որ ո՛չ միայն յօդուած կուտայ այլ պատուական կ'անուանէ այն թերթը՝ որոյ ընթերցումն իսկ պատժուալիս արգիւնած է եկեղեցական Իշխանութիւնէն, որ հոգեւոր ապստամբութեան ու մոլորութեան համար վարձուած ըլլալով, — զի չարի ծառայողն է վարձուած, իսկ բարւոյն ծառայողը մշակ է արժանի վարձու իւրոյ՝ ըստ Առաքելոյն, — որ երկու տարիէ ի վեր հոգեւորականութեան այնքան շատ ու վատ լուսանքներ եւ հայնոյանքներ եւ մինչեւ իսկ քացայայտ ու մեծամեծ մոլորութիւններ գրեց ու հիւրընկալեց, մինչեւ իսկ յապուշ կրթել խելամուտ եղողները եւ դարչանք ազգել ամենուն: ահա բոլոր այս կէրքերուն եւ ահաւոր վնասներուն եւ գայ-

թակողութիւններուն պատճառ գործակից եւ խրախուսիչ եղող մը խնչպէս ճշմարիտ անկեղծ բարեպաշտ կաթողիկէ կրնայ մնացած ըլլալ. «Եւ Սաւղոս եւ ԿՍՄԿԻՅ սպանման նորա»...

Պիտի լռեն՝ օր մը, անցաւոր աշխարհիս աղմուկները. կիրքերու յորձանապտոյտ հեղեղները պիտի ցածքին. այս բեկանուտ կեանքը իբրեւ ծաղիկ մը պիտի թարչամի խորշակահար, եւ կրք մարմիններն գերեզման իջնեն, մեր հոգիները ահեղ պատառխառնատուութեան ծանր բեռով պիտի ներկայանան Քրիստոսի Դատաւորին առջեւ, օր վայեր սպաննացած է անոնց որ փոքրնեւրէն նոյն իսկ մէկ հասր գայթակղեցուցած ըլլան... «Ոչ ամենայն որ ասիցէ ցիս՝ Տէ՛ր, Տէ՛ր, մեցէ յարայուրիս երկնից» (Մատթ. է. 21): «Ձի՞ կոչեմ զիս՝ Տէ՛ր, Տէ՛ր, եւ զոր ասեմն ոչ առնեմ» (Լուկ. 2. 49):

Այո՛, սարսափով կը յիշեցնեմ Առաքելոյն Պողոսի այն ահաւոր խօսքերը՝ (Եբր. ժԲ. 15-16) որոնցմով կը խրատէ հաւատացեալները չըջահայեաց զգուշութեամբ ճգնել Աստուծոյ շնորհքը չկորսնցնելու. եւ վարդապետութեան մասին թունաւոր եւ թուանաւորող արմատը կը դատապարտէ, ու սրբապիղծն ետաւայ պատժուիլը օրինակ կուտայ «ահիւ եւ զողութեամբ իւրաքանչիւր իր փրկութիւնը գործելու համար»: Կ'ըսէ. «Ձգոյ՛ք լերուք, զուցէ ոք յեկեալ գտնիցի ի շնորհացն Աստուծոյ: Մի՛ ոք արմատ դառնութեան ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովալ բազում պղծիցին: Մի՛ ոք. իբրեւ զեսաւ, որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն վաճառեաց: Գիտեմ, զի քեպէս եւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան գաւ. զի ապաշխարութեան տեղի ո՛չ եգիս, քեպէս եւ արտաւոյժ խնդրեաց զնա»:

Սթափինք եւ միանգամ ընդ միշտ համոզուինք որ Աստուծոյ ամենէն ընդունելի առաքինութիւնն՝ մեր հոգեւոր Պետերուն կատարեալ հպատակութիւնն է: մէկզի թողլով մարդկային նկատմունքները, ժողովրդային ակնկալութիւնները եւ մոլորութիւն-

ները. Սամուէլ մարգարէին բերնով ըսաւ Տէր. «Լաւ է ունկնդրութիւն քան զգոհ ըն-
սիր, եւ հնազանդութիւն քան զնարայ խոյոց»
(Ա. թագ. ԺԵ. 22) Կէս Առաքեալին բերնով
ըսաւ. «Ունկնդիր լինուի առաջնորդաց ձե-
րոց եւ հայասակ կացեմ ցոցա» (Երբ. ԺԳ. 17):

Գ. Վ. Թէրզիպուսեան

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՒՆԷԻ

Այս տիեզերքի բերքի մէկ մի բույն մէջ պիտի
դնենք՝ 1. շաքարեղէն, 2. մանուշակեղէն, 3. ծնունդ
բուրբիւններն ու հանդէսները, 3. ծնունդ կամ
սոնուելիք սուրբի մի վարուց ամփոփումը, 4. շաքարեղէն
հոգեւոր մեծութիւններ: Այս մեծութիւնները պիտի
սկսինք «Ի մանուշակեղէն Քրիստոսի» ոտնակներով
անոր իւրաքանչիւր զիտուն մէջ պարունակուած
հիւանդի առաւելներ կամ վնասներ կարծեմ
ամփոփելով: Այս գերազանցալից գեղեցիկ ու
պարզ գրոյցը որ ամէն քրիստոնէի հիւանդի
կ'առաջնորդէ կասարեւորութեան եւ
աւազանքեան շաքարեղէն մէջ, առհասարակ
Ս. Գիրքէն անմիջապէս վերջը դասուած է
հոգեւոր վարդապետներէն, իր երկնաւոր
անմահ օծութեան պատգամով. անկա
գրեք ամէն լեզուի քարգանձուած է
բազմիցս, անթիւ անհամար զգացումներ
ունեցած է դարեւան մէջ իմաստեղ
խուրդութեանց առաւելայ եղած
պնդալի՝ որ անոր հեղինակին վրայ
միայն զորուած հասարակներ հաւանելը
ստանալի գործ պիտի ըլլաւ: Բաւական
հաւանելի կարծիք մը կ'ըսէ թէ Գիրք-
նից քովէն Թովմաս Գեմքացի (1379—1471)
անունով կրօնաւոր մը եղած ըլլայ
հեղինակը: Դժբախտաբար այս
հոգեւոր գանձ եղող գրոյցը հայոց
մէջ, թէեւ երկիցս քարգանձուած՝
գրաբար եւ աւազանքաբար, չէ ու-
նեցած սակաւ ընդհանրացում.
մինչդեռ ամէն Կաթողիկէի հանապա-
գօրեայ սրբոյի ընկեր պէտք էր
ըլլաւ: Կը յուսանք որ մեր այս
որոշումով այս պալատին լրացում
կերպով մը ստանանք:

ՏՕՆԱՅՈՅՑ

Յունուար 5-ի Կիր. տի. Ճրագարոյց
Յայտնութեան 6-ի ԲՅ. թմ. Յայտնութիւն
ևր Մկրտում քիւն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի:

7-ի ԴՅ. թի. Բ. or Յայտնութեան

8 ԴՅ. թմ. Գ. » »

9 ԵՅ. թի. Դ. » »

10 Ուրբ. թմ. Ե. » »

11 Եր. թի. Զ. » »

Ս. Սեղբեստրոս (Sylvester) Հռոմէայ Հայ-
րապետը (270-335) տօնեցինք այսօր՝ շաքարեղէն, 4 ամ-
սոյս Լատինք կը տօնեն 31 դեկտեմբ. Նա ծնած է
ի Հռոմ, և որը մնայով ի Հօրէ, իր բարեպաշտ մը
խնամքով, քրիստոնէական կորովի դաստիարակու-
թիւն մը առաւ. Կիւրինոս քահանայի ձեռնօք, որ յի-
տոյ մարտիրոսացաւ: Սեղբեստրոս կարի ազգայնապետ
էր և պանդուխտները կը խնամէր անդադար. և քա-
հանայանայէն վերջն ա՛ստա իր հուծկու և ի օծու-
թեամբ քարոզութիւններով բազմաթիւ հետնորդներ
և Դոմատեան հերետիկոսներ դարձի բերել. ուստի և
քարչեցաւ յատեան և բանտ նետուեցաւ. սակայն
իր մարգարէութեան համաձայն նոր զիջեր բզեւ խը
մեռնելով, ազատուեցաւ: Այնքան կը փայլէր սրբու-
թեամբ և հրաշագործութեամբ, որ յամին 314 ընտ-
նեցաւ Քահանայապետ, և կոչուեցաւ Լուսաւորիչ
սրբաւորից: Հայածանքի պատճառաւ մեկուսացաւ
Սրբակալին լեռան վրայ՝ ի Սապինա, մօտ ի Հռոմ.
որ ինչպէս կ'ըսէ հրաշարեան աւանդութիւնը, ոչ-
ջազուրուեցաւ մեր երանելի Լուսաւորիչին հետ. այդ
լեռան վրայ հին մասբան մը մէջ վաղեմի որմանկար
մը կայ որ կը ներկայացնէ երկուց Հայրապետաց այս
յուզիչ տեսարանը: Ըստ գրեթէ ստոյգ աւանդու-
թեան Ս. Սեղբեստրոսը եղաւ նաեւ որ Նորադարձ
Կոստանդինոս Կայսրը մկրտեց, որմէ ճոխացաւ ինքն
սը մեծամեծ նուէրներով, յորս էր նաեւ Լատերանու
հոյակապ կաթեդրական պալատը, որոյ կից շինուեցաւ
մեծ Մայր-Եկեղեցին «Բապտիսմալ եւ Տիեզերաց» (Ur-
bis et Orbis): Ս. Սեղբեստրոս Քահանայապետը
երկու ժողով գումարել տուաւ. մին՝ յԱրեւատ քա-
ղաքին Գաղղիոյ, ուր դատապարտեց Դոմատեան հե-
րետիկոսներն, որոնց դէմ շատեց կը պայքարէր ինքը.
որ պայքարին մէջ երեւելի հանդիսացաւ նաեւ Ս.
Օգոստինոս. միւսը՝ ի Նիկիա (325), որ և առաջին
Տիեզերական ժողովն է, որու մէջ Քահանայապետ
Քահանայապետական պատուիրակներն՝ Վիկտորիոս,
Վիկտոր և երեւելի Արքի. Կորնուպալ (Cordova)

պու սէպէպէ մէսնի, ազլ ինանսրընը սե-
պէպէր վասիթասըլա պիզի իմանա հազըր-
լամալը տըր: Շու հալտէ, իլմի միւտաֆաա,
իման էսասընըն եախօտ մուգապտէմաթընըն
քեամիլէն ազլա մութապըզ, մէշրու վէ վա-
ճիպ իւլ իթիգատ օլադընը պուրէթը մու-
հագգագատէ իսպաթ էյլէյէն իլմ տիր:

Իմանըն էսասը կախօտ մուգատտէմաթը
թապիր օլունան նօթթալար, մէզհէպին ապը
էսասընը թէշքիլ էյլէյէն պիր գաշ պիրինճի
տէրէճէտէ հագիգաթլար տըրլար: Պու հա-
գալըզ, պիլա շէք ու շիւպհէ, տին մատ-
տէլէրիմիգաէն իսէլէրտէ, սինսիզլէրէ, իթի-
գատլարըմըզըն ազլա վէ իլմէ մուվաֆըզ օլ-
տուպլարընը իսպաթ էթմէք իչուն, պիզ
պուրատա օնլարը սըրֆ ազլ ու մանթըզ
նուրլարըլա թէտըզ իտէճէյիլ:

Պու հագիգաթլարը շու աթիտէքի պէշ
պաշընա հգաեքա իֆրաղ էտէպիլիբիլ:

1. Պիւթիւն վար օլանլարը վար էյլէյէն
պիր Ալլահ վար տըր:

2. Ալլահըն մախլուզը օլան ինսան,
րուհանի վէ էօլմէզ պիր ճանա մալիք տիր:

3. Ինսանա պիր մէզհէպ լազըմ տըր:
մէզհէպլէրտէն եալընըզ պիրի էյի, եալընըզ
պիր թանէսի տօղրու տըր:

4. Եալընըզ տօղրու օլան մէզհէպ, քը-
րիսթիան մէզհէպի տիր:

5. Քրիսթիան մէզհէպի անճապ պիր գա-
թօլիք Քրիստասընտա պուլունըր: Պու հա-
գիգաթլար զէնճիլ կիպի եէկտիկէրինէ մէր-
պութ տըրլար:

— Ալլահըն վարըզը վէ օնուն մախլուզը
պուլունան ինսանըն վարըզը, պիր մէզհէպին
լիւզումընը իսպաթ էտէր:

— Պիր մէզհէպին լիւզումը, մէզհէպլէր
արասընտա ճէնապը Հագգըն իսթէտիլի, էմր
իթտիլի սահիհ մէզհէպին հանկիսի օլտըզընը
վէ նէ ալամէթլէրլէ թանըլապիլտիլինի
արամայա պիզի մէզպուր իտէր:

— Ալլահըն էմր իթտիլի մէզհէպ Քրիս-
թիան մէզհէպի տիր:

— Պու քրիսթիան մէզհէպի իսէ, թամմ
վէ պիլա նօգան օլարազ, անճապ Յիսուս
Քրիստոսըն հազըզի քրիստսը պուլունան գա-
թօլիք Քրիստասընտա տըր:

— Գաթօլիք Քրիստասը, կէօյէրէ կիտէ-
պիլմէքլիլիմիլ իչուն ինսանճազըմըզ մատ-
տէլէրի վէ իճրա էտէճէյիմիլ վապիֆէլէրի
Ալլահ թարաֆընտան թաեին իտէն իման
զանունը տըր:

Իշթէ պու էսասի հագիգաթլարը իսպաթ
էթմէք քեաֆի տիր, չիւնքի պիր նէհրին
քէնտի մէնպաընտան վէ պիր նէթիճէնին
գաիտէյի քիւլլիյէտէն հուտուլա կէլտիլի կի-
պի, տիկէր հագիգաթլար տախի օնլարտան
իսթիտալ վէ իսթինթաճ օլունուրլար: Պու
էսասի հագիգաթլար իսպաթ իտիլէճէք
օլուրսա, գաթօլիք մէզհէպին նէ գատար
սահիհ վէ մանթըզի օլտուզը օ գատար աշի-
քեար պիր սուրէթտէ թէզահիւր էտէր քի
ազլ ու իարաքը տա ինքեար էթմէքալիլին,
մէզհէպի ինքեար էթմէք գապիլ օլամազ:

Պու սուրէթլէ Քրիստանըն պիլճիմիլէ
տիւշմէնլէրի տախի ըէտտ օլունմըշ օլուր-
լար:

1. Ալլահըն վարըզընը ինքեար էյլէյէն
միւլհիտլէր (1) «Ալլահալըզ»լար:

2. Մատտէտէն (նիւթ) պաշգա պիր շէյ
գապուլ էթմէյէն, Ալլահըն վէ րուհանի պիր
ճանըն մէվճուտիլթինի վէ ախրէթի ինքեար
էյլէյէն Մաթէրիալիսթլէր վէ Բօզիթիլիսթ-
լէր:

3. Պիր մէզհէպին լիւզումընա ինսանա-
յան վէ եախօտ հիչ պիր մէզհէպլէ ամիլ օլ-
մանան Գայտըզլար (Indifférents):

4. Քրիսթիանըզըն ալլահանի օլտուզընը
գապուլ էթմէյէն Տէիսթլէր, Բասիօնալիսթ-
լէր, Եէհուտիլէր, Ալլազգիլէր վէ Պիւթը-
րէսթլէր:

5. Գաթօլիք Քրիստասընըն լիւզումընը վէ
ալլահանի օլտուզընը ինքեար էյլէյէն Հերե-
տիկուլար, Հերճուաճուլար վէ Բրօթէսթան-
լար:

6. Նիհայէթ, Քրիստանըն, ալիլէնին վէ
վաթանըն էն ֆէնա տիւշմէնլէրի օլան Ֆրան-
մասօնլար:

(1) Էսէրին նիհայէթինտէ՝ անլաշըմատը
հէր քէսճէ գօլայ օլմանան պու թարզ քէլի-
մէլէրի հալի պիր լուղէթէ պուլունանճապ
տըր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ս. Քաջանայապետը ձենովայի Արք. անուանած էր զԱրհի. Գարոն, որ եկեղեցական նախնադարձութեամբ և ըստ հրահանգաց Նորին Սրբազնութեան ձեռնարկած էր իր թեմին մէջ կարեւոր բարեկարգութիւններ մտցնելու՝ Արդիական հերտիկոսաց ոտնձգութիւններուն դէմ, և ասոնց ծառայման հետամուտ եղող Հ. Սէմերիա անուն կրօնաւորը ստիպած էր ելլելու իր վիճակէն: Արդ ասոնք և անոնց համախոհները իտալական կառավարութիւնը համոզեցին վերջիւնեալ արքեպիսկոպոսին չառաւ կառավարական հրամանագիրը (exequatur): Ասոր վրայ Ս. Քաջանայապետը եկեղեցական արգելիքաւ, ձենովայի ամբողջ վիճակին մէջ արգելելով ամէն տեսակ եպիսկոպոսական պաշտամունք (Ձեռնադրութիւնը զրոյմ էն): Ժողովուրդը մեծապէս զգած ուելով, ամէն կողմանէ կը դիմէին առ Ս. Քաջանայապետին՝ հայցելով Անոր հայրական զթուծիւնը: Հակառակորդները ամօթապարտ մնալով, զզջացած են իրենց յանդիմութեան վրայ, և կառավարութիւնը կ'ընէ եզեր թէ ինք անոր համար մերժեց հրամանագիրը, որովհետեւ Արհի. Գարոն 1870ի Իտալիոյ կողմանէ Քաջանայապետական աշխարհական իշխանութեան անխաւ գրաւումին չհամակերպիր: Բարբառնշահք. քանզի ոչ Իտալիոյ հարկերէն աւելի եպիսկոպոսաց, այլ և բովանդակ տիեզերքի հաղաւաւոր եպ.աց մէջ չկայ և ո'չ մէկը որ համակերպի այս յափշտակութեան:

Իրենք զիրենք կաթողիկէ անուանող՝ բայց չեղող քանի մը թերթերու մասին (L'avvenire d'Italia, Il Corriere d'Italia, Il Momento, ևւն.) վճիռ տուած է Ս. Քաջանայապետը, յայտարարելով որ անոնք Ս. Աթոռոյ եղողութեան և հրամանաց հակառակ կը գործեն: Այս դատապարտութիւնը շատ մեծ ազդեցութիւն գործած է անոնց վարիչներուն վրայ:

Ս. Հայրն Կոնստանտնուպոլսի Ս. Ժողովոյն խորհրդական անուանած է անուանի աստուածաբան զՎեր. Հ. Լէրիսիէ:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

Ամեն. և Գերբը. Հոգեւոր Տեսուչ Պողոսի Պետրոսի ԺԳ.ի անուան տօնին առթիւ բազմաթիւ շնորհակցական այցելութիւններ տեղի ունեցան առ Նորին Վեհութիւնը: Գաղղիոյ դեսպանատան առաջին թարգման Ս. Լըսոն, եկաւ և յանուն Վ.թ.մ. Գեօպանին շնորհակցութիւն յայտնեց. նոյնպէս անձամբ գալով սիրալիր մաղթանքներ ըրաւ Ն. Վ. Յովհ.

բաշա Գուլումճեան: Այցելեցին Վենետիկ և Վիեննայի Միթ. Հարք, Անտոնեան Հարց ներկայացուցիչներ, Հայ կաթողիկէ և Լատին ժողովրդապետք, կաթող. Պատրիարքաց փոխանորդներ, Հայ կաթող. և Լատին կուսանաց Միաբանութիւնք, Պ. Պ. Մոմճեան, Սիրուն, Արապեան, Գասապեան, Մագաստար, Տօգթ. Թումայեան, Տգ. Գասապեան, Առաքելեան, Խրդաբեան, Արգար, Թելեան. ևւն. — Կէսօրին սեղան տրուեցաւ, որուն հրաւիրեալ էին բազմաթիւ քահանայք, և բաժակաճառ արտասանեցին. այլևայլ լեզուներով, Արհի. Արիարեան Արք., Գ. Գ. Միսքեան Գեր. և Ալճեան, Էքմէքճեան, Աստուրեան Վ.վ. Գերջ. Աճէմեան, Ն. Մ. Վ. որ հիւանդ է, գեղեցիկ ոտանաւոր ուղերձ մը զրկած էր, որ կարգացուելով, ցնծալից ծափահարուեցաւ: — Բոլոր թեմերէն նամակաւ և հեռագրով շնորհակցութիւններ հասան և կը հասնին դեռ:

Նորին Վեհափառութեան՝ Ալպեր Թագաւորին Պետիոյ մօրը մահուան առթիւ Ամեն. Հոգեւոր Տէր, որ մեծ հիւրասիրութիւն տեսած էր իրենց մէ, ցաւակցական նամակ մը գրած էր առ Թագաւորին՝ Նորին Վեհափառութիւնը հետեւեալ նամակը գրած է առ Ամեն. Հոգեւոր Տէր:

Պրիստի, 22 Դեկ. 1912

Ամենապատիւ Տէր,

Անկեղծաւոր յուզումով մըն է որ ընդունեցայ այն նամակն յորում Ձեր երջանկութիւնը արտայայտած է ինձ իւր ցաւակցութիւններ այն անդամների կորստեան համար զոր բոլր, եւ քաղցրան հանդիսացած է այն վրօսակցութեան զոր ունին իմ ցաւոյս Հայ-Կաթողիկէ նուիրապետութիւնը, կղերն ու ժողովուրդը:

Պարս անձին կը համարիմ վստահացնելու Ձեր Գերբաւելութիւնը իմ արագին երախտագիտութեան վրայ ի մասին այս արտայայտութեան Ձեր զգացումներուն իմ էւ իմ ընտանեաց համար, եւ այն խանդաղապական վերջուեւումն համար զոր կը զարթոցանէ իմ ողբայեալ մօրս կեանքէն. եւ կ'աղայեմ Ձեզ որ հանիք Ձեր ակնարկած անձնաւորութեանց հաղորդել իմ անկեղծ շնորհակցութիւններս:

Իմ մօրս յիշատակը Ձեր երջանկութեան աղօթից յանձնելով, կը նորոգեմ Ձեզ բարձր համարումի զգացումներս եւ եմ

Ձերդ անձկաւէս

Ա.Լ.ՊԵՐ

Ինչպէս նախապէս գրած էինք, մեր Հայ-կաթողիկէ Հասարակութենէն Վ.թ.մ. Յովհաննէս փաշա Գուլումճեան Լիբանանու կառավարիչ կարգուած է: Վերջերս Լիբանանու վարչական կանոնադիրը ինչ ինչ բարենորոգումներու ենթարկուած և վեց մեծ պետութիւններու կողմանէ վաւերացուած էր Ուրախատիւն է մեզի համար որ Յովհաննէս փաշայի պէս կաթողիկէ զգացումներով օժտուած անձնաւորութիւն մը Օսմ. կառավարութեան և միւս

տէրութիւններու լիութիւն վստահութեան կ'արժանանայ: Արդէն իր հայրը անտուայց և հանքաց պաշտօնեայ եղած էր: Յովհաննէս փաշա մեծամեծ ծառայութիւններ մատուցած է տէրութեան, իբր պաշտօնեայ Արտաքին գործոց նախարարութեան, առաջին քարտուղար Հռոմի դեսպանատան, անգամ պետական խորհրդայ, և վերջերս իբր խորհրդական Արտաքին գործոց նախարարութեան: Յովհաննէս փաշա այս առթիւ բարձրացած է վեդեթութեան աստիճանին: Կը շնորհաւորենք և յաջողութիւն կը մաղթենք:

*. Ի Տէր հանգեաւ յ30 դեկտ. 1912, ծերունազարդ և առաքինազարդ Գեորգ. Հ. Եղիշէ Թ. Մ. Վ. Գաֆթանեան, Վլկննայի Միթարեան Միաբան, ի հասակի ութսունհինգ ամաց: Լուսաֆոփ Հայրը փնդանի տիպար մըն էր Կաթողիկէ պարսաճանաչ քահանայի, և մեր մէջ կը շրջէր իրիւն անօրացած անխիթացած քաղցրատեսիլ պատկեր մը վաղեմի հաւատոյ և առաքնութեան: Իր երկարատեւ անտարտ կեանքը ամբողջ կը կայանար հեղափոխոյ խնամքովութեան ու մեղուաջան տնդադար ու կանոնաւոր աշխատութեան մէջ, որով գրեթէ պաշտելի դարձած էր ամենուն, մանաւանդ իրիւն խոստովանահայր: Եղաւ ժամանակ — շա՛տ հին, մեզի համար պատմական, — յորում սիրելի հանգուցեալը մշակեց նաեւ գրական ծիւղը և ունի պատուական երկասիրութիւններ. աշխատակցած էր նաեւ Վիենն. Միթարեանց Եւրոպայ թերթին, որ ան ժամանակ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է կրօնից և գիտութեան և լեզուի: Մին էր նա այն համոզուած արխիտիւր և խորապէս գիտական հայակապ արանց փաղանգին, որ անաչառ քաղցրութեամբ պատուաւոր պայքար մղեցին հայ-կաթողիկէ սրբութիւններն պաշտպանելու, ուղղափառութիւնը բանիւ և գրով ծաւալելու. աշխատակցած է նա ուրիշ փառապատկ Գաթրըճեաններու, Էմիլեաններու, Յովնանեաններու, Պալճեաններու, Այսաբեաններու, Գովրիկեաններու, այլովքն հանդերձ: Անոր և անոնց հոգին թո՛ղ հանգչի մեր պատուական կղերց նոր սերունդին վրայ, և նորա պայծառ հոգին որ հասունցած ազնիւ պատուի մը պէս փրթաւ Յիսուսի ձեռքին մէջ, բարեխօս ըլլայ մեզի համար յերկնաւոր անվախճան փառս:

*. Ամենապ. Հոգեւոր Տէր Ամանորի պայքրութիւն տուաւ Միթարեան Միաբանութիւններու:

*. Հանգուցեալ Հ. Եղիշէի յուզարկաւորութեան Ամենապ. Հոգեւոր Տէրոջ կողմանէ ներկայ գտնուեցան և նախագահեցին, Արհի. Ռոքոսեան և Արփիարեան Արքեպիսկոպոսներ: Հանգեւոր շատ փառաւոր եղաւ և օրհնուեցաւ սիրեցեալ և սրբաւոր հանգուցելոյն քաղցր յիշատակը:

*. Ամանորոյ պայքրութեան եկաւ առ Ն. Գեօրեջանկութիւն՝ Գաղղոյ Կամպէթալ յաճանաւուն Ծովակալ և բոլոր ծովակալներու գլխաւորն՝ Պ. Տար-

թիփ տը Ֆուրնէ, և մեծ պատուով ընդունուեցաւ և սիրալիր խօսակցութիւններ տեղի ունեցան:

*. Նշնպէս Ամանորոյ առթիւ շնորհաւորական պայքրութիւն տուաւ յանուն Յունաց Տեղապահին՝ անոր փոխանորդ Եպոք յոյն երեւելիի մը հետ:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Շ Ա Յ Ե Բ

Ազգ. Ժողովը վերջին օրերուս մէջ մեծ ոգեւորութիւն ցոյց կուտայ չորս տարիէ ի վեր առկաթողութեամբ Օրմանեանի դատը աւարտելու ի նպաստ անոր անմեղութեան: Բացց կուտակցականներն կը շարունակեն անոր մեղապարտութիւնը հաստատելու, թէեւ քուէից առաւելութեամբ անպարտութիւնը հաստատուի. մանաւանդ կը պնդեն անոր կեղծաւոր քաղաքականութեան, մատնելները պաշտպանելուն և Լաֆէյ դրկած հեռագրին վրայ: Ժողովը երկու նիստի մէջ զրաղեցաւ այս խնդրոյն թեր ու գէ՛տ վիճարանութեամբ: Վերջին նիստին մէջ քուէարկութեան արգելուեցաւ ժողովրդային ազմուկի կամ լաւ եւս՝ ժողովոյն վրայ ժողովրդային բանարարութեան պնասճաւաւ: Լուսարձակ այս մասին յօդուած մ'ունի որ խորապէս մտածել կուտայ մեզ իր անխիղճ կողմնակալութեան վրայ, երբ խնդրը հայ-կաթողիկէից վրայ դառնայ: Կ'ընէ ի մէջ այլոց. «Չսակցուած չմբռնուած «Ժողովուրդ» մը կայ: Եթէ այս «Ժողովուրդ»ն է որ հայ ժողովուրդին ամբողջութիւնը կը կաշմէ, մե՛ղք մեզի, ալլ էս իրիւն ժողովուրդ, իրիւն ազգ ապրելու իրաւունք չունինք մենք, որովհետեւ ժողովուրդը կ'ունայ ապրելի միայն օրինասրութեամբ: Թող այդ «Ժողովուրդ» իր շէֆերուն, իր ամբոխալարներուն առաջնորդութեամբ կուրէ թափէ, կախաղանի կամ փառքի գազաթնակէտին հասցնէ իր ուղածին պէս, իր ուղածները, և ահա իրագործուած կ'ըլլայ երազը բոլոր անոնց որոնք հաճոյք կը զգան այս ազգը անխիստութեան, պառակտումի, քայքայումի մէջ ինկած տեսնելով: Սակայն ո՞վ է այդ «Ժողովուրդը», հասկնա՞նք: «Ժողովուրդ»ը նորէն պիտի աղմկէ: Բայց ո՞ր կ'ընթացատր վերջը: Միթէ դժուար քան է առաջիկայ նիստին այս ժողովուրդին գէ՛տ հանել միւս ժողովուրդն ալ, որ բուն ժողովուրդն է, առանց չակերտի...» Ահա նորէն երկու չափ երկու նժար. տրամաբանութիւն և խիղճ, ո՞ր պիտի գտնուին...

*. Հայաստանի մասին մոծուելիք բարեկարգութիւններով կը զրաղի այժմ ներքին գործոց նախարարութիւնը: Խօսքեր ալ չըմբերուեցան իբր թէ Ռուսիոյ առաջնորդով ինքնօրինութիւն պիտի տրուի եղեր. սակայն հայոց խնդրածն ուրիշ բան չէ եթէ ոչ արդարութիւն, որ հիմնուած է կենաց, պատուոյ և ինչի ի ապահովութեան վրայ: Ասոք մէջ կը կայ յանայ խնդրոյն էութիւնը. ազատուել անգամ մը յափշտակութիւններէ և հարստահարութիւններէ: Որ եթէ ձեռք բերուի, և ճամբաներ շինուին ու երկաթգործութիւնն ալ յառաջդիմէ, ան աստիճան հա ժո.

ՌԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, արեւկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դիկ.:— Արաստեման՝ ար. շր. 10. վեցամս. 5.—Վնարմունկ կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

KATOGHIGHE ARZAKANK

Pera, 5 Rue Bairam 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՐ.— 1.—Արձագանգ կը նմանակուի Շարաք օրեր: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նմանակել իրեն զրկուած ու եւ յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չ'ն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթով քուրթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մանուաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրութեամբ ի միասին դրել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենաճիճի եղիս եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրապարակներ, քարտեր, քարտ-արտեր, մանագրներ, եւն., եւն.: Գիրքեր անմեղեղի կերպով աւան են: Գեղեցկագիտական հաս-
տակի եւ տպագրական մատուցեան կողմանէ յանձնարողները անհրաժեշտ զոհ պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարաշխան Սկզբունք Գրիստեանական Վարդապետութեան» հաստատեալ էկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ, Գին, ամուր քողակազմը 2 դիկն.: